ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 15-Ա
23 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թ.
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԻԹ - ԲԵԿ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 8/113 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 15,1 ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, համաձայն Կապան համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Համայնքային սեփականություն համարվող գույքը /ոչ բնակելի տարածքները և շինությունները/ ուղղակի վաճառքով և հրապարակային սակարկություններով օտարելու դեպքում օտարման գին սահմանելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 103-Ն որոշման, հաշվի առնելով անշարժ գույքի գնահատման 08.02.2018թ. հաշվետվությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 8 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Դավիթ-Բեկ թաղամասի 8/113 հասցեում գտնվող 15,1 քառ.մ մակերեսով ոչ բնակելի տարածքը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 2384169/ օտարել հրապարակային սակարկություններով՝ մեկնարկային գին սահմանելով 277000 /երկու հարյուր յոթանասունյոթ հազար/ դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (8)՝

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ — ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ

ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ — ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ — ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ

ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ — ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2018թ փետրվարի 27
ք. Կապան